

2020թ. երկրորդ եռամսյակի համար պլանավորվել է 236948.9 հազ. դրամ եկամուտներ, փաստացի կատարվել է 231821.5 հազ. դրամ կամ 97.8%:

2020թ. երկրորդ եռամսյակի համար սեփական եկամուտներ պլանավորվել է 51606.2 հազ. դրամ, փաստացի կատարվել է 46935.0 հազ. դրամ կամ 90.9 %:

<u>եկամուտների անվանումը</u>	<u>պլան</u>	<u>փաստացի</u>	
հողի հարկ	5490.0	4666.4	85 %
գույքահարկ	15300.2	13469.1	88%
պետական տուրքեր	2700.0	2870.3	106.3%
տեղական տուրքեր	3270.5	3141.8	96.1%
հողերի վարձավճար	4271.8	2730.3	63.9%
գույքի վարձակալություն	1667.7	1522.2	91.3%
տեղական վճարներ	18072.0	17420.4	96.4%
որից՝			
աղբահանության վճար	12500.0	11435.6	91.5%
համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	360.0	599.4	166.5%
վարչական տույժ և տուգանք	10.0	0.0	
համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	415.0	466.1	112.3%
այլ ոչ հարկային եկամուտներ	49.0	49.0	100 %
Ընդամենը սեփական եկամուտ	51606.2	46935.0	90.9%
Պաշտոնական դրամաշնորհներ և ՔԿԱԳ			
դոտացիներ պետ. բյուջեից	178264.0	178264.0	100%
սուբվենցիա (արվեստ դպր., աշխատավ.)	4620.8	4620.8	100%
պատվիրակված լիազորություններ	2457.9	2001.7	81.4%
Ընդամենը	236948.9	231821.5	97.8 %:
Ոչ ֆինանսական ակտիվներից մուտքեր /բյուջեի ֆոնդային մաս/ գույքի և հողի օտարումից մուտքեր	6000.0	3628.3	60.5%

2020թ. երկրորդ եռամսյակի համար բյուջեի վարչական մասով ծախսեր են պլանավորվել 241276.8 հազ. դրամ, փաստացի կատարվել է 230619.3 հազ. դրամ կամ 95.6%:

- Ծախսերի 19.5%-ը ուղղվել է աշխատանքի վարձատրությանը՝ 44943.9 հազ.դրամ:
Ծախսերի 8%-ը ուղղվել է ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը՝ 18369.6 հազ.դրամ, որից
9644.6 հազ. դրամ՝ էներգետիկ ծառայություններ (բնական գազի և էլ.էներգիայի վճար)
272.4 հազ. դրամ՝ կոմունալ ծառայություններ (ջրամատակարարման ծառայությունների վճար)
652.7 հազ. դրամ՝ կապի ծառայություններ (դոմենի հաշվեգրման, հոսթինգ ծառայության, հեռախոսի և ինտերնետի վճար)
40.0 հազ. դրամ՝ ապահովագրական ծախսեր
94.0 հազ. դրամ՝ գործուղումներ
442.1 հազ. դրամ՝ համակարգչային ծառայություններ («Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի» տեղակատվական համակարգի սպասարկման, «ՀԾ-հաշվապահ 7» ծրագրի սպասարկման, «Վեկտոր Պլյուս»՝ գույքահարկի և հողի հարկի ծրագրի սպասարկման վճար)
150.0 հազ. դրամ՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ («ՀԾ-հաշվապահ 7» ծրագրի սեմինարի մասնակցության վճար)
924.2 հազ.դրամ՝ տեղակատվական ծառայություններ (թերթերի բաժանորդագրության, գունավոր տպագրության, Ֆորտունա ՍՊԸ-ին հեռուստատեսային ծառայությունների վճար)
685.0 հազ. դրամ՝ կառավարչական ծառայություններ (իրավաբան-խորհրդատուի և ներքին աուդիտի ծառայությունների վճար)
731.1 հազ. դրամ՝ ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (Լոկատոր՝ քաղաք. լուսավորության ավտոմատ կառ. համակարգի սպասարկման ծառայության, աշխատանքային փաստաթղթերի կարման ծառայությունների վճար)
735.5 հազ. դրամ՝ մասնագիտական ծառայություններ (գազասպ.համակարգի. տեխնիկական սպասարկ. և կարգաբերման, համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր հաստիքների մրցույթների համակարգչային ծրագրի սպասարկման և անցկացման ծառայությունների, անշարժ գույքի չափագրման ծառայությունների վճար)
350.0 հազ. դրամ՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (պատճենահանող և տպող սարքերի քարթիջների լիցքավորման, համայնքի տեսահսկողության համակարգի վերանորոգման վճար)

513.3 հազ. դրամ՝ գրասենյակային նյութեր և հագուստ (ծաղիկ. և ծաղկեպսակ. ձեռքբերման, գրասենյակային նյութերի համար)

2670.0 հազ. դրամ՝ տրանսպորտային նյութեր (բենզինի և ավտոպահեստամասերի գումար)

264.8 հազ. դրամ՝ կենցաղային և հանրային սննդի նյութեր (տնտես., սանհիգ. և լվացքի միջոցների, ավտոահանող նյութերի համար)

199.9 հազ. դրամ՝ հատուկ նպատակային այլ նյութեր (տնտեսական ապրանքների համար)

72.1 %-ը հատկացվել է համայնքային 9 ՀՈԱԿ-ների պահպանմանը՝ 166290.6 հազ. դրամ

0.4%-ը ուղղվել է այլ ծախսերի կատարմանը՝ 1015.2 հազ. դրամ (սոց. օգնություն, դատարանի պետ.տուրք, կադաստրային ծառայութ. վճար, բնապահպան. հարկ)

2020թ. երկրորդ եռամսյակում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր կատարվել է 10199.8 հազ. դրամի, որից 981.8 հազ. դրամ Ուրասար բնակավայրի համար ցինկապատ թիթեղների ձեռքբերման գումար, 39.0 հազ. դրամ հեռահար ջերմաչափի, 449.0 հազ. դրամ շենքերի(Ռումինական թաղամաս թիվ 4 շենք, Դեսինի փողոց թիվ 36, Վիրահայոց փողոց թիվ 78 շենք) սեյսմիկ հետազոտության և եզրակացության ծառայության համար, 3960.0 հազ. դրամ՝ Ստեփանավան խոշորացված համայնքի Ստեփանավան-Կաթնաղբյուր համայնքային ենթակայության ճանապարհի հիմնանորոգման և ասֆալտապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար, 1750.0 հազ. դրամ՝ Ստեփանավան համայնքի Մեղապարտ, Ռուսթավելի, Սուրբ Նշան, Նալբանդյան և Դուրյան փողոցների մայթերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար: